# ՄԵՆՔ ՄԵՐ ԳՈՐԾԸ ԼԱՎ ԳԻՏԵՆՔ

## Փորփրելու փոխարեն ավելի լավ է օգնեք...

*Հայրենական մեծ պատերազմից հետո մեծ քանակությամբ գերմանական գրքեր և արխիվային նյութեր, որպես ռազմավար, տեղափոխվել են Սովետմիության տարբեր քաղաքներ, այդ թվում նաև Հայաստան: Այսօր Գերմանիան փորձում է համաձայնության գալ Հայաստանի հետ և վերադարձնել իր արժեքները:*

*Մեզ մոտ՝ Հայաստանում կա մոտ 10000 գերմանական գիրք: Ի՞նչ ճակատագիր է սպասվում այդ գրքերին, կվերադարձվե՞ն դրանք Գերմանիային, թե՞ ոչ, դեռևս հայտնի չէ: Այդ մասին տեղեկություններ և պարզաբանումներ է տալիս Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ* **Ֆադեյ Սարգսյանը:**

*– Պրն Սարգսյան, ի՞նչ ճանապարհով են գերմանական գրքերը և արխիվային նյութերը հասել Հայաստան:*

– Ես ենթադրում եմ, որ եղել են մարդիկ, որոնք գնացել, ջոկել-բերել են այդ գրքերից այնպիսիները, որոնք իրենց հետաքրքրել են: Դրանք մասնագիտական գրքեր են և բերվել են դրանցից օգտվելու և դրանցով աշխատելու համար:

*– Գերմանիան ինչպե՞ս է իմացել դրանց այստեղ գտնվելու մասին:*

– Ճանապարհներ շատ կան իմանալու համար: Ես չեմ կարծում, որ դեսպանատան միջոցով է դա պարզվել: Գուցե մարդիկ են եղել, որ այդ մասին ասել են...

Չէ որ մեր գիտնականներն օգտվում են դրանցից, միգուցե նրանք են հետները տարել ու այնտեղ տեսել են...

*– Գրքերում մեզ համար հետաքրքիր, Հայաստանի վերաբերյալ նյութեր կա՞ն:*

– Մեզ համար հետաքրքիր նյութեր մենք նրանցից ստացել ենք վերջերս: Նրանք մեզ են ուղարկել Հայաստանին վերաբերող իրենց արխիվներում եղած նյութերը: Այդ նյութերը հիմա գտնվում են Ցեղասպանության մեր թանգարանում: Դա նրանք արել են որպես մարդասիրական քայլ: Իսկ հիմա խոսքը գնում է այն գրքերի մասին, որոնք գտնվում են մեր ինստիտուտներում, ֆունդամենտալ գրադարաններում: Այդ գրքերից մեր ինստիտուտներում կան բավականին արժեքավորները, որոնցից մենք այսօր էլ օգտվում ենք և, իհարկե, դրանք մնում են: Եվ հետո մենք հո գիժ չենք, որ շատ կարևոր, Հայաստանի վերաբերյալ ինչ-որ գրքեր լինեն ու տանք մեկնումեկին:

*– Իսկ, Ձեր կարծիքով, ճի՞շտ կլինի այդ գրքերը վերադարձնելը:*

– Ես կարծում եմ՝ ճիշտ կլինի, եթե դրանց դիմաց համապատասխան փոխհատուցում ստանանք: Քանի որ դրանք իրենց գրքերն են, իրենց արժեքները, որ նրանց համար ավելի մեծ նշանակություն ունեն, քան մեզ համար: Վերադարձնելու դեպքում կարելի է հաշտության եզրեր գտնել, համապատասխան փոխանակումներ անել, փոխհատուցում ստանալ:

*– Ինչպիսի՞ փոխհատուցում կամ փոխանակումներ կլինեն:*

– Ըստ երևույթին մենք դրա դիմաց կստանանք համապատասխան գրականություն կամ մի ինչ-որ պայմանագիր կկնքվի: Բայց որ ինչ-որ բանով կփոխհատուցվի դրանց դիմաց, ես ոչ մի րոպե չեմ կասկածում, որովհետև գիտեմ, որ Վրաստանում էլ եղել են այդպիսի գրքեր և երբ Վրաստանը վերադարձրել է դրանք, լավ փոխհատուցում է ստացել: Նրանք լրիվ չեն ասում, թե ինչ են ստացել, բայց ես գիտեմ, որ Գերմանիան նրանց տեխնիկա է տվել, գումար, գրականություն...



Պետք է ասել, որ մենք ունենք այդպիսի փոխանակման ֆոնդ և շատ երկրների հետ գրքերի փոխանակման պայմանագրեր: Հիմա շատ բաներ այդ կերպ ենք մենք ձեռք բերում, որովհետև գրքերը մեծ գին ունեն արտասահմանում, իսկ մեզ մոտ դրանք շատ էժան են և մեզ համար դժվար է գրականություն ձեռք բերել: Անցյալ տարի եթե մենք ձեռք ենք բերել մոտ 30 միլիոն դրամի գիրք, ապա այս տարի առայժմ մեզ տրամադրվել է ընդամենը 3 միլիոն: 3 միլիոնով մենք չենք կարող մեր հարցերը լուծել և պետք է ինչ-որ այլ ճանապարհներ փնտրել:

*– Ի՞նչ կասեք գերմանական ձեռագրերի մասին, որ 1998 թվականին վերադարձվեցին:*

– 1998 թվականի ձեռագրերից չխոսենք: Եղել են ձեռագրեր, որոնք մենք վերադարձրել ենք Գերմանիային և դրանց դիմաց բաներ ստացել ենք: Մենք այստեղ շահել ենք, ոչ թե տուժել: Այդ մարդիկ, որոնք անում են այդպիսի հարցադրումներ, ավելի լավ է մտածեն մեզ՝ ակադեմիային օգնելու մասին, մտածեն ինչպե՞ս պետք է աշխատի, ապրի գիտնականը, օգնեն ակադեմիային գրականություն ձեռք բերել և ոչ թե ամեն անգամ փորփրեն, թե ով ի՞նչ է տվել: Այդպիսով, նրանք մեզ խանգարում են, ոչ թե օգնում: Նրանք թող լավ իմանան, որ մենք իրենցից հարյուր անգամ լավ ենք հասկանում, թե ինչ կարելի է տալ, ինչ՝ չտալ և ինչ վերցնել: Մենք մեր գործը լավ գիտենք և ոչ ոք այդքան շահագրգռված չէ գրքերի պահպանման համար, որքան մենք, քանի որ դրանք մեր ամենաթանկ կապիտալն են:

Իսկ ինչ վերաբերում է ձեռագրերին, դրանք ըստ էության ձեռագրեր չեն եղել, այլ գրքեր, հին գրքեր են եղել: Ձեռագիր մենք ենք ասում: Ձեռագիր ասելով, ընդհանրապես, մենք հասկանում ենք մեր ձեռագրերի պես թանկարժեք ձեռագրեր, իսկ այդպիսի ձեռագրեր մեզ ո՞վ կտար, կամ որ լինեին էլ՝ մեր Մատենադարանում կլինեին: 98-ին դրանք վերադարձվել են, որովհետև մեզ համար այդքան մեծ կարևորություն չեն եղել: Օրինակ, մեր հին ձեռագրերը մեզ համար ավելի մեծ արժեք ունեն, քան Գերմանիայի: Եվ հակառակը. Պուշկինի կամ Մոցարտի գրած մի փոքրիկ երկտողը Ռուսաստանի կամ Գերմանիայի համար ավելի մեծ նշանակություն ունի, քան մեզ համար: Բայց ես կրկնում եմ, դրանք այդ տեսակ ձեռագրեր չեն եղել:

ՆԱԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ